ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 10.12.2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 348-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Վարազդատ Հարությունյանի խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Դավիթ Մելքոնյանի և Ռոման Ահարոնյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Միքայել Գրիգորյանի բողոքը (մուտք՝ 07.01.2026թ. № 13-2026) Պալատի նախագահի 10.12.2025 թվականի թիվ 348-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Քաղաքացի Միքայել Գրիգորյանը (**այսուհետև նաև՝ Բողոքաբեր**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև նաև՝ Պալատ**), հայտնել է, թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական վարույթի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 22-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել իրեն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին: Միքայել Գրիգորյանի պաշտպան է նշանակվել հանրային պաշտպան Հայկ Սարգսյանը **(այսուհետև նաև՝ Փաստաբան):** Վերջինս 2025 թվականի ապրիլի 24-ից մինչև նոյեմբերի 05-ը Դիմողին չի տրամադրել իրավաբանական ծառայություն, չի նախապատրաստել դատական նիստերին, չի ներկայացրել պաշտպանական մարտավարությունը, չի ունեցել պաշտպանյալի հետ կոնֆիդենցիալ հանդիպումներ: 27.05.2025թ., 10.07.2025թ.,

03.09.2025թ. նշանակված դատական նիստերը չեն կայացել պաշտպանի բացակայության պատճառով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Բողոքաբերը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, 10.12.2025 թվականի թիվ 348-Ա որոշմամբ **(այսուհետև նաև՝ Որոշում)** փաստաբան Հայկ Սարգսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>Փաստաբանի դիրքորոշումը և հիմնավորումները</u>**:

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Հայկ Սարգսյանին առաջարկվել է՝ ներկայացնել բացատրություն Միքայել Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը ներկայացրել է բացատրություններ, համաձայն որոնց՝ թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական գործով 2025 թվականի մայիսի 27-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստը հետաձգել է, քանի որ նույն օրը ժամը 10:30-ին թիվ ԱՐԴ/0330/01/23 քրեական գործով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Էջմիածին» նստավայրում ունեցել է նախապես՝ մինչև թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական գործով մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ որոշման կայացումը, նշանակված դատական նիստ: Դատական նիստին չներկայանալու հանգամանքի վերաբերյալ նախապես տեղեկացրել է դատարանին: 2025 թվականի հուլիսի 10-ին ժամը 15:30-ին նշանակված դատական նիստը ևս հետաձգել է իր դիմումի համաձայն՝ թիվ ՍԴ1/0031/01/23 քրեական գործով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Էջմիածին» նստավայրում նույն օրը՝ ժամը 16:30 նախապես նշանակված դատական նիստին մասնակցելու պատճառաբանությամբ: Դատական նիստին չներկայանալու հանգամանքի վերաբերյալ նախապես տեղեկացրել է դատարանի աշխատակազմին: Նշված գործով դատական նիստին ներկայանալու անհրաժեշտությունը հիմնավորել է նաև այն հանգամանքով, որ թիվ ՍԴ1/0031/01/23 քրեական գործը վերաբերել է 2020 թվականի դեկտեմբերի 11-ին Արցախի Հանրապետությունում թվով 9 զինվորների զոհվելու հանգամանքների պարզմանը: Փաստաբանը նշել է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Արմավիր» և «Էջմիածին» նստավայրերը միմյանցից գտնվում են 27 կմ հեռավորության վրա և մեկ նստավայրից մյուսին հասնելը տևում է 40 րոպե: 2025 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 11:00-ին նշանակված

դատական նիստը հետաձգվել է հանրային մեղադրողի բացակայության պատճառաբանությամբ, ինչն ըստ Փաստաբանի՝ հավաստվում է «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգում կատարված համապատասխան նշումով: Բացի այդ, Փաստաբանը նշել է, որ թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական գործով հաջորդ դատական նիստին ներկայացել է, մինչ դատական նիստի մեկնարկը խորհրդակցել է Միքայել Գրիգորյանի հետ, պարզաբանել է նրա իրավունքները և պարտականությունները, որոշում են կայացրել դատավորին բացարկ հայտնել:

Նշել է, որ իրականացրել է բոլոր անհրաժեշտ գործողությունները Դիմողի շահերի պաշտպանությունն իրականացնելու համար:

Բացատրություններին կից ներկայացրել է ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումները, «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգից արտատպված փաստաթղթերը և թիվ ԱՐԴ/0330/01/23 գործով ծանուցագիրն ու այն ստանալու փաստը հավաստող գրությունը:

3. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>10.12.2025</u> **<u>թվականի թիվ</u>** <u>348-</u>**<u>Ա որոշման էությունը</u>**<u>.</u>

Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, որ Բողոքաբերն ըստ էության Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու վարքագիծը:

Դիմումի և առկա ապացույցների հաշվառմամբ Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տված լինելու մասին:

Բողոքաբերի դժգոհությունը փաստացի վերաբերում է նրան, որ թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական վարույթով 27.05.2025թ., 10.07.2025թ., 03.09.2025թ. նշանակված դատական նիստերը հետաձգվել են Փաստաբանի չներկայանալու պատճառաբանությամբ, բացի այդ, Փաստաբանը չի տրամադրել իրավաբանական օգնություն, այսինքն՝ չի տրամադրել իրավաբանական խորհրդատվություն և չի ներկայացրել պաշտպանական մարտավարությունը:

Պալատի նախագահի որոշման համաձայն՝ Փաստաբանը Դիմողի կողմից նշված դատական նիստերին չի ներկայացել օբյեկտիվ պատճառներով: Ինչպես նաև Պալատն ընդունելի է համարում այն, որ Փաստաբանը նախապատվությունը տվել է այն դատական նիստին, որը նշանակված է եղել ավելի վաղ, ինչպես նաև վերաբերել է զգայուն հարցերի՝ Արցախի Հանրապետությունում զինվորների մահվան հանգամանքներին:

Ներկայացված փաստերի շրջանակներում, Պալատը, դիտարկելով Փաստաբանի գործողությունները, գտել է, որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր փաստարկ, որը հնարավորություն կտա գնահատել Փաստաբանի վարքագիծը Բողոքաբերի իրավունքների ոչ պատշաճ իրականացնելու վարքագիծը, ինչի հիման վրա էլ մերժել է վարույթի հարուցումը:

4. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 17.12.2025 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ հղում կատարելով իր նախկին դիմումների շրջանակներում նկարագրված հանգամանքներին՝ ըստ էության պնդելով նույն դիրքորոշումը:

Մասնավորապես, Բողոքաբերի պնդմամբ, Փաստաբանը դատական նիստերից բացակայել է ոչ օբյեկտիվորեն, իրեն որևէ անգամ իրավաբանական խորհրդատվություն չի տվել, մարտավարություն չեն ընտրել, նույնիսկ գրավոր բացարկի միջնորդություն պատրաստած չեն եղել, ինչի պատճառով էլ դատական նիստը հետաձգվել է:

Նշել է նաև, որ իր հետ հանդիպումները պետք է կազմակերպեր փաստաբանը, քանի որ վերջինիս գրաֆիկը միշտ ծանրաբեռնված է եղել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Հայկ Սարգսյանի և Բողոքաբեր Միքայել Գրիգորի Գրիգորյանի միջև թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական գործի շրջանակներում առկա են եղել փաստաբան-վստահորդ հարաբերություններ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի և Փաստաբանի դիմումներով, ինչպես նաև «Դատալեքս» կայքէջի ուսումնասիրությամբ:*

2. Փաստաբանը 27.05.2025 թվականին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին չի մասնակցել, քանի որ դեռևս 17.05.2025թ. ծանուցված է եղել նույն օրը 10:30-ին ք.Էջմիածնի նստավայրում թիվ ԱՐԴ/0330/01/23 գործով կայանալիք դատական նիստի վերաբերյալ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի կողմից ներկայացված ծանուցագրով և դրա ստանալը հավաստող փաստաթղթով:*

3. Փաստաբանը թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական գործով 10.07.2025 թվականին ժամը 15:30-ին նշանակված դատական նիստին չի մասնակցել, քանի որ նույն օրը ժամը 16:30-ին անհրաժեշտ է եղել մասնակցել թիվ ՍԴ1/0031/01/23 քրեական վարույթով նախապես նշանակված դատական նիստին, որի շրջանակներում քննվել է Արցախի Հանրապետությունում 9 զինվորների մահվան հանգամանքները: ***Նշված փաստը***

հաստատվում է *Փաստաբանի կողմից ներկայացված փաստաթղթերի և «Դատալեքս» կայքէջի ուսումնասիրությամբ:*

4. Թիվ ԱՐԴ/0438/01/23 քրեական գործով 03.09.2025 թվականի դատական նիստը հետաձգվել է մեղադրողի չներկայանալու պատճառաբանությամբ: ***Նշված փաստը հաստատվում է*** *«Դատալեքս» կայքէջի ուսումնասիրությամբ:*

5. 29.09.2025 թվականի դատական նիստը հետաձգվել է Միքայել Գրիգորյանի պաշտպան Հայկ Սարգսյանի միջնորդության հիման վրա, հաջորդ դատական նիստի ընթացքում միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված: ***Նշված փաստը հաստատվում է*** *«Դատալեքս» կայքէջի ուսումնասիրությամբ:*

6. ԱՐԴ/0438/01/23 քրեական գործը քննվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Արմավիր» նստավայրում, իսկ թիվ ՍԴ1/0031/01/23 և ԱՐԴ/0330/01/23 քրեական վարույթները «Էջմիածին» նստավայրում: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի կողմից ներկայացված փաստաթղթերի և «Դատալեքս» կայքէջի ուսումնասիրությամբ:*

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում****:*

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Խորհուրդը որոշում է կայացնում Փաստաբանների պալատի նախագահի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին, եթե բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում կարգապահական գործը քննելով հանգում է այն եզրակացության, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն, այն է՝ Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտումն, առերևույթ բացակայում են:

Սույն գործով Բողոքաբերը չի նշել որևէ հիմնավորում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 10.12.2025 թվականի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին թիվ 348-Ա որոշումն Օրենքի խախտմամբ ընդունած լինելու վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերը չի ներկայացրել որևէ հանգամանք, որն առերևույթ կփաստի Փաստաբանի կողմից իրեն պատշաճ իրավաբանական օգնություն չցուցաբերելու, վերաբերյալ:

03.09.2025թ. դատական նիստի հետ կապված հարկ է նշել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական հարթակում հստակ նշված է, որ տվյալ դատական նիստը տեղի չի ունեցել հանրային մեղադրողի բացակայության պատճառով:

Հարկ է փաստել, որ Փաստաբանը չի ունեցել օբյեկտիվ և ողջամիտ հնարավորություն մասնակցելու 27.05.2025 թվականին՝ 30 րոպե տարբերությամբ նշանակված երկու դատական նիստերին, ինչպես նաև 10.07.2025 թվականին՝ 1 ժամ տարբերությամբ նշանակված երկու դատական նիստերին, քանի որ դրանք տեղի են ունեցել միմյանցից 27 կմ հեռավորության վրա:

Ներկայացված բողոքով Բողոքաբերը նշում է, որ Փաստաբանի պնդումը խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ մասնակիորեն սխալ է, մինչդեռ՝ նախորդիվ Բողոքաբերը լիովին հերքում էր իրեն խորհրդատվություն տրամադրելու հանգամանքը: Այն, որ Փաստաբանը բացարկի գրավոր միջնորդություն չի ունեցել, սակայն դատական նիստը հետաձգել է այն ներկայացնելու համար արդեն իսկ նշանակում է, որ մինչև դատական նիստի սկսվելը Փաստաբանը Բողոքաբերի հետ խորհրդակցել է և նրանք եկել են ընդհանուր որոշման:

Ամբողջացնելով վերոգրյալը, կարելի է արձանագրել, որ Բողոքում ներկայացված չէ որևէ հիմնավորում «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու համար:

Խորհուրդը գտնում է, որ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ Դիմողի կողմից չի ներկայացվել որևիցե հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տված լինելու մասին: Ուստի՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 10.12.2025 թվականի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին թիվ 348-Ա որոշումը հիմնավոր է և պետք է այն թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 10.12.2025 թվականի «Փաստաբան Հայկ Սարգսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 348-Ա որոշման դեմ Միքայել Գրիգորյանի կողմից 07.01.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 10.12.2025 թվականի թիվ 348-Ա որոշումը:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Վարազդատ Հարությունյան**

07 փետրվարի, 2026թ.
թիվ ԿԳ/04-Ա
ք. Երևան